ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 20 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 1

դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա.Գյուլումյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Թունյանի

Քննության առնելով «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպությունը (ներկայացուցիչներ՝ Արա Ղազարյան, Արտակ Զեյնալյան) 04.09.2017թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1 ու 2, 41, 51 ու 78, 79, 80, 81 ու 7, 48, 49, 183-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ «Հողային» օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասին «մասնակցել» և 7-րդ մասի՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթները»:

2. Դիմողի փաստարկները հիմնականում հանգում են հետևյալին.

դիմողը նշում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից տեղեկատվություն ստանալու՝ անձի իրավունքը կարող է սահմանափակվել բացառապես օրենքով՝ երբ անհրաժեշտ է պաշտպանել հանրային շահերը, և երբ անհրաժեշտ է պաշտպանել այլոց հիմնական իրավունքները և ազատությունները:

Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ բացասական իրավական հետևանքներ են առաջացրել դատարանների կողմից կիրառված՝ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի դրույթները: Որպես հիմնավորում՝ դիմողն ընդգծում է, որ հանդիսանում է հետաքննող լրագրությամբ զբաղվող կազմակերպություն, որը գործում է կանոնադրության հիման վրա, և այդ կանոնադրական նպատակներից ու խնդիրներից է, ի թիվս այլնի, Հայաստանում հետաքննական լրագրության զարգացմանը նպաստելը, տեղեկատվություն հավաքագրելը և տարածելը: Մասնագիտական գործունեության իրականացման նպատակով դիմողը դիմել է մի քանի համայնքների ղեկավարների՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառքները դիտարկելու և լուսաբանելու նպատակով աճուրդին ներկա գտնվելու թույլտվություն ստանալու պահանջով: Համայնքների ղեկավարները, դիմողի գնահատմամբ, վիճահարույց գրություններով մերժել են վերջինիս դիմումը և արգելել են ներկա գտնվել հողերի աճուրդ-վաճառքներին, դիտարկել և լուսաբանել դրանք, որը հանդիսացել է համայնքների ղեկավարների ակտերի իրավաչափության՝ դատական կարգով վիճարկման առիթ:

Ըստ դիմողի՝ Սահմանադրությամբ երաշխավորված՝ խոսքի ազատության և միավորումների ազատության իրավունքների ապահովման պարտականությունը կազմակերպությանը գրանցելով չի սահմանափակվում, Սահմանադրության 3-րդ հոդվածով սահմանված պարտականությունների ծավալն իրացված համարվելու համար անհրաժեշտ է, որպեսզի պետությունը մշտապես ապահովի և պաշտպանի, այդ թվում՝ օրենքներով, դիմողի խոսքի ազատության և միավորումների ազատության սահմանադրորեն երաշխավորված իրավունքները:

Դիմողը գտնում է, որ «Քաղաքացիական հասարակության ինստիտուտների, լրագրողների կողմից համայնքային հողերի աճուրդ-վաճառքներին ներկա գտնվելը և դրանց ուսումնասիրությունը, դիտարկելն ու լուսաբանելը բոլորովին պարտադիր չէ, թե կհանգեցնի չարաշահումների կամ կոռուպցիոն երևույթների բացահայտման, այն կարող է հանգեցնել նաև «լավ կառավարման» օրինակների բացահայտմանը,...»:

Դիմողը պնդում է, որ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասում օրենսդիրը գործածել է աճուրդին «մասնակցում» են եզրույթը, ինչը վերաբերում է գրանցված՝ աճուրդում հաղթող ճանաչվելու շահ ունեցող անձանց, կազմակերպչին ու արձանագրողին և չի վերաբերում այդ կարգավիճակը չունեցող անձանց, դիցուք՝ քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներին, լրագրողներին և այլն:

ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համադրության արդյունքում դիմողը եզրահանգել է, որ բացարձակ արգելքն ստեղծել է մի իրավիճակ, երբ կոնկրետ ոլորտին վերաբերող իրավական ակտով անտեսվում է տեղեկատվության ազատության՝ օրենքով նախատեսված երաշխիքների իրացումը, իսկ նման իրավիճակը չի բխում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքից: Վիճարկվող դրույթների սահմանափակումները համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը, գերազանցում են «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով և Եվրոպական դատարանի պրակտիկայով սահմանված սահմանափակումները:

3. Ուսումնասիրելով դիմումը և գործում առկա նյութերը՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը պարզեց, որ առկա չեն դիմումի քննությունը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,

- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

1. «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի «մասնակցել» և 7-րդ մասի՝ «Աճուրդն սկսվելու պահից դահլիճ մտնելն արգելվում է» դրույթների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

20 սեպտեմբերի 2017 թվականի
ՍԴԴԿՈ/1-20